ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (պատվիրակության ղեկավար)

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 2021 թ. ապրիլի 20-22

4. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության պաշտպանության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Համաճարակային բարեկեցություն» խորագրով միջազգային համաժողովին

6. Քննարկված թեմաները

Միջոցառման ընթացքում քննարկվեցին բնակչության համաճարակային բարեկեցության ապահովման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, COVID-19-ի, ինչպես նաև այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժման ընդհանուր մոտեցումները, առաջարկվեցին առողջապահության բնագավառում ներկա մարտահրավերների և արդիական հարցերի լուծման համատեղ ուղղություններ:

Համաժողովի ընթացքում հատուկ նշանակություն տրվեց տարածաշրջանում համաճարակաբանական իրավիճակի գնահատմանը, քննարկվեցին ազգային և տարածաշրջանային մակարդակներով իրականացվող ՄԻԱՎ վարակի, COVID-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների համաճարակների դեմ հակազդման միջոցները,

համաճարակաբանության և կանխարգելման ոլորտում գիտության նորագույն ձեռքբերումները, ախտորոշման և բուժման նոր ուղղությունները:

Միջոցառումը կազմակերպվել էր՝ ելնելով բնակչության համաճարակային բարեկեցության ապահովման անհրաժեշտությունից:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովին հիբրիդային ձևով մասնակցել են ԱՊՀ, Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի երկրներից պատվիրակություններ, ԱՀԿ, UNAIDS և մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի շրջանակում, ապրիլի 20-ին նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը մասնակցեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման գործում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներին Ռուսաստանի Դաշնության տեխնիկական օժանդակության Համակարգող խորհրդի նիստին, որի ժամանակ ներկայացրեց ՌԴ տեխնիկական օժանդակության շրջանակներում Հայաստանի իրականացրած աշխատանքները, գրանցված ձեռքբերումները, ինչպես նաև 2021 թվականի հեռանկարները:

Միջոցառման շրջանակներում անցկացվեցին նաև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանային երկու խորհրդակցություններ, որոնց ընթացքում քննարկվեցին ԱՀԿ համաճարակային բնույթ կրող իրավիճակներին արագ արձագանքման համակարգի բարեփոխման, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով ՄԱԿ-ի նոր քաղաքական հռչակագրի վերաբերյալ միասնական մոտեցումներ ցուցաբերելու հարցերը: Խորհրդակցությունների ընթացքում մասնակից երկրների պատվիրակության ղեկավարները հիշյալ հարցերի մասին ներկայացրին իրենց երկրների դիրքորոշումներն ու նկատառումները:

Համաժողովի երկրորդ օրը՝ ապրիլի 21-ին, նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով Հայաստանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ հաջողված պայքարի հիմքի վրա ստեղծված նոր կորոնավիրուսային հիվանդության հակազդման հայաստանյան փորձը:

Միջոցառման շրջանակներում Լենա Նանուշյանն առանձին հանդիպումներ ունեցավ ՌԴ սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության պաշտպանության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար

Աննա Պոպովայի, UNAIDS-ի գործադիր տնօրենի տեղակալ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Շենոն Հայդերի հետ: Հնարավորություն ստեղծվեց նաև քննարկումներ ունենալ Բելառուսի, Տաջիկստանի, Ղրղզստանի, ԱՀԿ և ԱՊՀ Գործադիր կոմիտեի գործընկերների հետ:

Երկօրյա համաժողովը բաղկացած էր 21 զուգահեռ նիստերից: ՀՀ առողջապահության նախարարության պատվիրակության անդամներից Ալեքսանդր Բազարչյանը և Հովհաննես Մադոյանը նախագահեցին «Գիտատեխնիկական համագործակցությունը սանիտարահամաճարակային բարեկեցության ապահովման օժանդակության շրջանակներում» և «ՄԻԱՎ-ը և քաղաքացիական հասարակությունը» խորագրերով նիստերը: Պատվիրակության անդամները հանդես եկան մի շարք զեկույցներով՝ ներկայացնելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, COVID-19-ի, հեպատիտների և այլ վարակիչ հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման ուղղությամբ իրականացված աշխատանքները, երկրի ձեռքբերումները, այդ թվում նաև՝ միջազգային համագործակցության արդյունքում գրանցված հաջողությունները:

ՀՀ առողջապահության նախարարության Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի երեք աշխատակիցներ ՌԴ սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության պաշտպանության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Ա. Պոպովայի կողմից պարգևատրվեցին շնորհակալագրերով՝ Հայաստանին ՌԴ–ի նվիրաբերած լաբորատոր ախտորոշիչ շարժական կենտրոններում բարեհաջող աշխատանք իրականացնելու համար:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ՌԴ սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության պաշտպանության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Աննա Պոպովայի հետ հանդիպման ընթացքում Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը ներկայացրեց Հայաստանում COVID-19-ի հետ պայմանավորված իրավիճակը, քննարկվեցին վարակի հակազդմանն ուղղված քայլերը, ուրվագծվեցին վերը նշված ոլորտում Ռոսպոտրեբնադզորի հետ հետագա համագործակցության ուղղությունները: UNAIDS-ի գործադիր տնօրենի տեղակալ,

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական Շենոն Հայդերի հետ հանդիպման ընթացքում նշվեցին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի գործում Հայաստանի ձեռքբերումները, ինչպես նաև ընդգծվեց այդ ուղղությամբ իրականացվող ծրագրի շարունակականության կարևորությունը:

Միջոցառման ավարտին ընդունվեց «Համաճարակային բարեկեցություն» միջազգային համաժողովի ամփոփիչ հայտարարությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

27 ապրիլի 2021 թ.

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164